ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ՝ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐ

Սլովենիայում տեղի ունեցած ՖԻԴԵ-ի նախագահական խորհրդի հերթական նիստում վերջապես գրոսմայստերի կոչում շնորհվեց 18-ամյա երեւանցի տաղանդավոր շախմատիստ Կարեն Ասրյանին, որը 7 անգամ լրացրել է գրոսմայստերի նորման: ՖԻԴԵ-ի նախագահական խորհրդի նիստին մասնակցում էին նաեւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, ՖԻԴԵ-ի փոխնախագահ Վանիկ Զաքարյանը եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանը: Ինչպես հայտնի է, Կարեն Ասրյանը վերջերս Մինսկում ավարտված միջազգային ներկայացուցչական մրցաշարում 9 հնարավորից վաստակելով 7,5 միավոր, վստահորեն գրավեց առաջին տեղը, կրկին գերազանցելով գրոսմայստերի նորման: Կարեն Ասրյանը մինչեւ 16 տարեկան շախմատիստների աշխարհի փոխչեմպիոն է: Նա բացարձակ լավագույն արդյունքը ցույց տվեց Երեւանում տեղի ունեցած շախմատի համաշխարհային օլիմպիադայում, 12 հնարավորից վաստակելով 10 միավոր: Կարեն Ասրյանն այսօր Հայաստանի ամենակրտսեր գրոսմայստերն է: «Ֆուտբոլ +»-ը ի սրտե շնորհավորում է տաղանդավոր շախմատիստին եւ, իհարկե, նրա մարզիչ հորը՝ Արարատ Ասրյանին, ցանկանում նորանոր փայլուն հաջողություններ: